Subject to Clause 9.5, the liability of the Bank and each other member of the HSBC Group to you due to, under and/or arising out of or in connection with this Agreement shall, in aggregate in any calendar year, not exceed USD 1 million.

9.5 Անկախ վերոհիշյալ կետ 9.4-ում նշված սահմանաչափից, այն չափով որքանով Բանկի կամ Էյչ-Էս-Բի-Սի խմբի որևէ այլ անդամ ընկերության դեմ ներկայացված և բավարարված հայցը (միայն կոպիտ անփութության կամ դիտավորյալ արարքի հետևանքով կրած ուղղակի վնասի համար) վերաբերվում է Հաճախորդի Հանձնարարականի համաձայն վճարվելիք գումարի որոշ մասին կամ ամբողջ գումարին, Բանկը պատասխանատվություն է կրում՝

Notwithstanding the limit set out in Clause 9.4 above, to the extent a successful claim against the Bank or any other member of the HSBC Group (ie for direct loss arising as a result of its gross negligence or wilful misconduct only) relates to all or part of the principal amount payable under a Customer Instruction (such amount, the 'Lost Principal'), the Bank shall be liable for:

9.5.1 Կորցված Հիմնական Գումարի համար, և

The Lost Principal; and

9.5.2 Ցանկացած տոկոսագումարի համար, որը հնարավոր կլիներ վաստակել Կորցրած Դիմնական գումարի հետ կապված, պայմանով, որ ցանկացած տոկոսագումարի վճարում համապատասխանաբար կնվազեցվի, եթե ա) ցանկացած տոկոսագումար կամ այլ վճարներ, որոնք պետք է վճարվեին Ձեր կողմից չեն գանձվել կորուստի պատճառով, կամ (բ) կորուստի հետևանքով Դուք վաստակել եք որոշակի տոկոսագումար, որը այլ դեպքում չէիք վաստակի:

Any interest which might reasonably have been earned in relation to the Lost Principal, provided that any interest payment shall be reduced accordingly if (a) any interest or other charges which would have been payable by you were not charged as a result of the loss; or (b) any interest was earned by you which would not otherwise have been earned.

9.6 Դուք պարտավորվում եք փոխհատուցել Բանկի կամ Էյչ-Էս-Բի-Սի խմբի որևէ անդամ ընկերության կողմից վնասի կամ կորուստի հետևանքով կրած բոլոր ծախսերը, եթե այդ կորուստը կամ վնասը առաջացել են՝

You will indemnify and hold the Bank and any member of the HSBC Group harmless from all losses and liabilities incurred by the Bank or any member of the HSBC Group as a result of:

9.6.1 Ձեր կողմից Պայմանագրով սահմանված որևէ պարտավորության խախտման հետևանքով, կամ

Any breach by you of your obligations under this Agreement; or

9.6.2 եթե Բանկը կամ Էյչ-Էս-Բի-Սի խմբի որևէ անդամ ընկերությունը գործել են սույն Պայմանագրի համաձայն կամ Համակարգի միջոցով ստացված Ձեր որևէ Հաճախորդի հանձնարարականի կամ Ծառայությունների վերաբերող որևէ այլ հաղորդագրության հիման վրա, անկախ նշված հանձնարարականը, հաղորդագրությունը ձեր կողմից լիազորված լինելու կամ համաձայնեցված ձևին համապատասխանելու հանգամանքից):

The Bank or any member of the HSBC Group acting on any Customer Instruction or other communication relating to the Services, whether or not such Customer Instruction or communication was: (a) authorised by you, or (b) in an agreed form.

10. Դադարեցում Termination

10.1 Յուրաքանչյուր կողմ իրավունք ունի դադարեցնել սույն Պայմանագիրը ամբողջությամբ կամ որոշակի ծառայության գծով՝

Either party may terminate this Agreement in whole or in relation to any Service:

10.1.1 մյուս կողմին ոչ պակաս քան 30 օր առաջ գրավոր տեղեկացնելու դեպքում, կամ *On not less than 30 days' written notice to the other party;* or

10.1.2 անմիջապես՝ գրավոր տեղեկացնելով մյուս կողմին, եթե պայմանագրի մյուս կողմը ա) թույլ է տալիս Պայմանագրի պայմանների էական խախտում (իսկ եթե դադարեցումը վերաբերվում է միայն որոշակի Ծառայությանը, ապա եթե պայմանագրի մյուս կողմը թույլ է տվել պայմանագրի պայմանների էական խախտում նշված Ծառայության գծով), որը չի վերացվել այդպիսի ուղղում պահանջող գրավոր ծանուցում ուղղարկելուց հետո 14 օրվա ընթացքում, կամ (բ) ճանաչվում է անվճարունակ՝ համապատասխան օրենսդրության համաձայն:

With immediate effect by written notice to the other if the other party: (a) commits a material breach of this Agreement (or, if termination is in relation to the Services only, commits in relation to that part of the Services, a material breach of this Agreement) which is not remedied within 14 days of a written notice requiring remedy; or (b) becomes insolvent under the laws of any applicable jurisdiction.

10.2 Ցանկացած պատճառով Պայմանագրի որևէ կետի գործողության դադարեցման դեպքում, դադարում են նաև տրամադրված որևէ Ծրագրերի կամ Նյութերի համապատասխան արտոնագրերի գործողությունները:

Upon termination for any reason of any part of this Agreement for which Software or Materials were supplied, any such Software or Materials licence terminates.

10.3 Դադարեցումը չի անդրադառնա դադարեցման օրվա դրությամբ կողմերի ունեցած իրավունքների վրա, ոչ էլ այն կանդադառնա սույն պայմանագրի որևէ այլ դրույթների վրա (ներառյալ Պայմանագրի 5, 6, 9, 11.2 և 12 կետերը), որոնք կիրառելի են դադարեցումից հետո:

Termination will not affect the rights and remedies of either party accrued to the date of termination nor will it affect any provision of this Agreement (including, without limitation, Clauses 5, 6, 9, 11.2 and 12) which is intended to apply after termination.

10.4. Ժամանակ առ ժամանակ մենք կարող ենք դադարեցնել Համակարգի կողմից տրամադրվող Ծառայություններն ամբողջությամբ կամ մասամբ Համակարգի հեթոքական, արտահերթ կամ վթարային տեսիլիակա սպասարկում անցկացնելու նպատակով, կամ եթե մենք անհրաժեշտ համարենք դա: Նման դադարեցման դեպքում, մենք կգործադրենք բոլոր հնարավոր միջոցները հնարավոր ամենաառաջ ժամկետում նախապես ծանուցելու ձեզ նման դադարեցման մասին:

From time to time we may suspend some or all of the System or Services for routine, non-routine or emergency maintenance or for any other reason where we reasonably consider it necessary to do so. In the event of such a suspension, we will where reasonably practicable provide you with a reasonable period of notice prior to the suspension.

11. Ֆորս Մաժոր Եվ Այլ Իրավունքներ Force Majeure and Other Rights

11.1 Կողմերից ոչ մեկը, ոչ էլ Էյչ-Էս-Բի-Սի խմբի որևէ անդամ պատասխանատվություն չեն կրում սույն պայմանագրի համաձայն պարտավորությունների չկատարման կամ կատարումն ուշացնելու հետևանքով պատճառված վնասների, կորուստի (ներառյալ բաց թողնված շահույթի համար, եթե նման վնասն ամբողջությամբ կամ մասամբ պատճառվել է պետության կամ պետական որևէ մարմնի գործողությունների, բնական աղետների, օրենքների կամ կարգերի (կամ դրանց մեկնաբանման փոփոխության), դատարանի որոշման, արժույթային սահմանափակման, սանկցիայի, արժույթային կարգավորման, գործադուլի (անկախ նրանից, թե տվյալ կողմի աշխատակազմը մասնակցում է այդ գործադուլներին, թե՛ ոչ) պատերազմի, ահաբեկչական գործողությունների, սարքավորումների խափանման, էլեկտրականության խափանման կամ մեր հսկողությունից դուրս որևէ այլ պատճառով: Համապատասխան կողմը հնարավորին կարճ ժամկետում տեղյակ կպահի մյուս կողմին նման հանգամանքների առկայության մասին:

Neither party nor any member of the HSBC Group will be liable for any loss (including loss of profit), damage, delay or failure in performing any of its duties relating to this Agreement caused in whole or in part by the action of any government or governmental agency, natural occurrence, law or regulation (or any change in the interpretation thereof), injunction, currency restriction, sanction, exchange control, industrial action (whether involving its staff or not), war, terrorist action, equipment failure, or interruption to power supplies or anything else beyond its reasonable control. The affected party will attempt to notify the other party as soon as is reasonably practicable of the existence of such circumstances.

11.2 Բանկը և Էյչ-Էս-Բի-Սի խմբի անդամ այլ ընկերությունները պարտավոր են կատարել համապատասխան երկրների օրենքների պահանջները, որոնք վերաբերվում են փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելմանը և սանկցիաների ենթակա այլ անձանց կամ հաստատություններին ֆինանսական և այլ ծառայությունների տրամադրմանը: Բանկը կարող է, իր իսկ հայեցողությամբ, կատարել կամ հանձնարարել Էյչ-Էս-Բի-Սի խմբի այլ անդամ ընկերությունների կատարել այնպիսի գործողություններ, որոնք անհրաժեշտ են այդ օրենքների և կանոնակարգերի պահանջները կատարելու համար: Այդպիսի գործողություններն ընդգրկում են (սակայն չեն սահմանափակվում) Բանկի համակարգերով, Համակարգով կամ Էյչ-Էս-Բի-Սի խմբի անդամ որևէ ընկերության համակարգերով Հաճախորդին ուղղարկված կամ նրա կողմից կամ նրա հնունից ստացված ցանկացած վճարման հաղորդագրությունների և այլ տեղեկությունների կամ Հաճախորդի հանձնարարականների կատարումը և ստուգումը, լրացուցիչ հարցումներ կատարելը պարզաբանելու համար, թե արդյոք սանկցիաների ենթակա որևէ անձի կամ կազմակերպությանը հղում պարունակող որևէ ամուս, իրականում վերաբերվում է այդ անձին կամ կազմակերպությանը: Անկախ սույն Պայմանագրի որևէ այլ դրույթից, ո՛չ Բանկը, ո՛չ էլ Էյչ-Էս-Բի-Սի խմբի որևէ այլ անդամ ընկերություն պատասխանատվություն չեն կրում որևէ անձի կողմից կրած կորուստի կամ վնասի համար (անկախ նրանից թե դա ուղղակի թե անուղղակի վնաս է թե՛ եկամտի, տոկոսի կամ տվյալների կորուստ է), եթե այդպիսի վնասն առաջացել է՝

The Bank and other members of the HSBC Group are required to act in accordance with the laws and regulations operating in various jurisdictions which relate to the prevention of money laundering, terrorist financing and the provision of financial and other services to any persons or entities which may be subject to sanctions. The Bank may take, and may instruct other members of the HSBC Group to take, any action which it, in its sole and absolute discretion, considers appropriate to act in accordance with all such laws and regulations. Such action may include but is not limited to: the interception and investigation of any payment messages and other information or Customer Instructions sent to or by the Customer or on its behalf via the Bank's systems or the System or any

other member of the HSBC Group's systems; and making further enquiries as to whether a name which might refer to a sanctioned person or entity actually refers to that person or entity. Notwithstanding any provision of this Agreement, neither the Bank nor any member of the HSBC Group will be liable for loss (whether direct, consequential or loss of profit, data or interest) or damage suffered by any party arising out of:

11.2.1 Բանկի կողմից սույն Պայմանագրով սահմանված իր պարտավորությունները չկատարելու կամ դրանց կատարումն ուշացնելու պատճառով, եթե դա ամբողջությամբ կամ մասամբ տեղի է ունեցել Բանկի որոշակի գործողությունների արդյունքում, որոնք վերջինս ձեռնարկել է իր հայեցողությամբ մշակած օրենքների և կանոնակարգերի պահանջները կատարելու համար, կամ սույն կետի համաձայն Բանկի կողմից իր իրավունքներն իրականացնելու ժամանակ:

Any delay or failure by the Bank or any member of the HSBC Group in performing any of its duties under this Agreement or other obligations caused in whole or in part by any steps which the Bank, in its sole and absolute discretion, considers appropriate to act in accordance with all such laws and regulations; or the exercise of any of the Bank's rights under this clause.

11.2.2 Որոշ հանգամանքներում Բանկի կողմից ձեռնարկվող գործողությունների հետևանքով որոշակի տեղեկությունների մշակումը կարող է ուշանալ: Ուստի ոչ Բանկը, ոչ էլ Էյչ-Էս-Բի-Սիի խմբի անդամ որևէ ընկերություն չեն երաշխավորում, որ սույն կետի համաձայն ձեռնարկած որևէ գործողությունների առարկա հանդիսացող որևէ վճարման հաղորդագրություններին և Հաճախարդների հանձնարականներին վերաբերող բոլոր տեղեկությունները ճշգրիտ են և արդի՝ հաճախորդի կողմից համակարգ մուտք գործելու պահին, եթե այդ գործողությունները դեռ կատարման ընթացքում են: Բանկը կձեռնարկի բոլոր հնարավոր միջոցները տեղեկացնելու ձեռք այդ հանգամանքների առկայության մասին՝ համապատասխան օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

In certain circumstances, the action which the Bank may take may prevent or cause a delay in the processing of certain information. Therefore, neither the Bank nor any member of the HSBC Group warrants that any information on the Bank's systems relating to any payment messages and Customer Instructions which are the subject of any action taken pursuant to this clause is accurate, current or up to date at the time it is accessed, whilst such action is being taken. Subject to the overriding requirements of any applicable laws and regulations, the Bank will endeavour to notify the Customer of the existence of such circumstances as soon as is reasonably practicable.

12. Այլ դրույթներ Miscellaneous

12.1 Սույն Պայմանագիրը հանդիսանում է կողմերի միջև Համակարգի և Ծառայությունների օգտագործմանը և տրամադրմանը վերաբերող ամբողջական պայմանագիր: Այն փոխարինում է Համակարգին և Ծառայություններին վերաբերող, Ձեր և մեր միջև նախկինում կնքված ցանկացած այլ պայմանագրի, նամակագրության, երաշխավորության կամ քննարկման, որոնց գործողությունը դադարեցվում է սույն պայմանագրի ուժով: Կողմերից և ոչ մեկը իրավունք չունի պահանջ ներկայացնել պայմանագրի մյուս կողմին՝ Համակարգի և Ծառայությունների հետ կապված որևէ նախկին պայմանագրերի, նամակագրությունների, երաշխավորությունների և քննարկումների հիման վրա, բացառությամբ զեղծարարությունների դեպքում: Ձեր և մեր միջև կնքված մյուս բոլոր պայմանագրերը, պայմանները և/կամ Ձեր հաշիվների վարմանը կամ դրանց հետ կապված ծառայությունների տրամադրմանը վերաբերող հրահանգները կմնան անփոփոխ: Սույն Պայմանագրի և նման այլ պայմանագրերի պայմանների միջև որևէ հակասություն առաջանալու դեպքում նախապատվությունը տրվում է սույն Պայմանագրին, եթե վեճը վերաբերվում է սույն Պայմանագրի առարկային:

This Agreement forms the entire agreement between the parties concerning the supply and use of the System and Services. It supersedes any pre-existing agreements, communications, representations and discussions between you and us relating to the System and Services, which are hereby terminated. Neither party will have a right of action against the other arising from any previous agreement, communication, representation and discussion in respect of the System and Services, except in the case of fraud. Any other agreements between us and you, terms of business and/or mandates relating to the conduct of your accounts or our provision of related services shall remain unaffected, save that if any conflict between such terms and the terms of this Agreement arises, this Agreement shall prevail in so far as the conflict relates to the subject matter of this Agreement.

12.2 Սույն Պայմանագրի համաձայն ներկայացվող ցանկացած ծանուցում պետք է ուղղարկվի փոստով կամ ֆաքսով՝ ստացող կողմի հայտնած վերջին հասցեով: Ծանուցումը ուղարկելու վերաբերյալ հաստատումը կհամարվի Հաճախորդի կողմից այն ստանալու հաստատում, այն

ժամկետում որի ընթացքում նման ծանուցումը սովորաբար կհասնել կամ կառաքվել տվյալ հաճախորդին:

Any notice to be given under this Agreement must be communicated by post or facsimile to the address most recently notified by the receiving party. Proof of posting or transmission of any notice to the Customer shall be deemed to be proof of receipt of the notice by the Customer at the time when the notice would in the ordinary course be delivered or transmitted.

12.3 Եթե մենք համաձայնության ենք գալիս, որ կարող ենք հաղորդակցվել միմյանց հետ (կամ երրորդ որևէ կողմի հետ) էլեկտրոնային փոստի, ինտերնետի միջոցով կամ կապի որևէ այլ միջոցով (համապատասխան Համակարգից բացի), ապա դուք պետք է գիտակցեք, որ նման դեպքում կա որոշակի ռիսկ, որ նման եղանակով ուղղարկված ցանկացած նամակագրություն /հաղորդագրություն կարող է ներխուժման և միջամտության ենթարկվել երրորդ անձանց կողմից: Մենք պատասխանատվություն չենք կրում ձեր և մեր միջև փոխանակվող, կամ ձեր իսկ խնդրանքով երրորդ անձանց հետ տեղի ունեցող որևէ նամակագրության (կամ ձեր անունից ուղղարկված որևէ հաղորդագրության) առնչությամբ տեղի ունեցած որևէ նման պատահարի համար:

If we agree that you may communicate with us or we agree to communicate with you (or any third party) via e-mail, the Internet, or any other method (other than via the relevant System), you acknowledge the risks that any such communications may be intercepted, monitored, amended or otherwise interfered with by third parties. We are not responsible or liable to you or any third party in the event of any such occurrence in relation to any communication between us and you (or which appears to have been made on your behalf), or any communication you ask us to enter into with any third party.

12.4 Դուք պարտավորվում եք վճարել մեր կողմից տրամադրվող Համակարգի և Ծառայությունների համար սահմանված սակագները և վճարները (որտեղ որ դրանք կիրառելի են), իսկ մենք իրավունք ունենք գանձել Ձեր հաշիվներից, անկախ դրանց գտնվելու և բացած լինելու վայրից, ցանկացած նման վճարների և/կամ սակագների գումարները: Մենք կարող ենք փոփոխել մեր սակագները և/կամ վճարները կամ դրանց վճարման ժամկետները՝ Ձեզ առնվազն 30 օր առաջ այդ մասին տեղեկացնելով:

You agree to pay our fees and other tariffs (where applicable) for providing the System or Services as we advise you from time to time, and we are entitled to debit your accounts wherever they are situated and wherever they are opened, with the amount of any such fees and/or tariffs. We may vary our fees and/or tariffs and the frequency and dates of payment on giving you not less than 30 days' notice.

12.5 Պայմանագրի յուրաքանչյուր կողմ իր հերթին պետք է պատշաճ զգուշություն ցուցաբերի երաշխավորելու համար, որ Համակարգի միջոցով փոխանակվող տեղեկությունները ախտահարված չեն որևէ համակարգչային վիրուսներով, Տրոյական Ձի կոչվող ծրագրերով, ինչպես նաև այլ քայքայիչ ծրագրերով:

Each party shall take all reasonable precautions to ensure that communications through the System are not affected by computer viruses, Trojan horse programs (such as key loggers) and other harmful programs or components.

12.6 Սույն պայմանագրի կետերից յուրաքանչյուրը անջատ է մյուսներից (ներառյալ, տարընթերցումից խուսափելու նպատակով Կետ 9-ում սահմանված պատասխանատվության բացառմանը վերաբերող դրույթները) և եթե այդ կետերից մեկը կամ մի քանիսը ուժը կորցրած են ճանաչվում, ապա դա չի ազդի մյուս բոլոր կետերի իրավական ուժի վրա:

Each of the terms of this Agreement (including for the avoidance of doubt the exclusions of liability in Clause 9) is severable from the others and if one or more of them becomes void, illegal or unenforceable, the remainder will not be affected in any way.

12.7 Սույն պայմանագրով սահմանված Բանկի իրավունքները ա) կարող են օգտագործվել այնպիսի հաճախականությամբ ինչպիսին որ անհրաժեշտ է, (բ) կուտակային են և չեն բացառում որևէ այլ համապատասխան օրենսդրության ներքո սահմանված իրավունքները, և (գ) Բանկը կարող է հրաժարվել որոշակի իրավունքներից գրավոր ձևով: Իր որևէ իրավունքը իրականացնելու ուշացումը կամ նման իրավունքը չիրականացնելը չի ենթադրում Բանկի կողմից այդ իրավունքներից հրաժարում:

The rights of the Bank under this Agreement (a) may be exercised as often as necessary; (b) are cumulative and not exclusive of its rights under any applicable law; and (c) may be waived only in writing and specifically. Any delay in the exercise or non-exercise of any such right is not a waiver of that right.

12.8 Դուք իրավունք չունեք, առանց մեր նախնական գրավոր համաձայնության, փոխանցել սույն պայմանագրով սահմանված որևէ իրավունք կամ արտոնություն:

You may not assign any right or benefit under any provision of this Agreement without our prior written consent.

12.9 Երբեմն, օրենքներում և/կամ այլ իրավական ակտերում կատարված փոփոխությունների հետևանքով, մենք կարող ենք փոփոխություններ կատարել սույն Պայմանագրում՝ ձեզ առնվազն 30 օր առաջ այդ մասին տեղյակ պահելով, իսկ՝ բացառիկ դեպքերում ավելի կարճ ժամկետում, եթե դա անհրաժեշտ է Օառնությունների արդյունավետության բարձրացման նպատակով:

We may make modifications to this Agreement which are required due to changes in any laws and/or regulations by giving you not less than 30 days' notice or, exceptionally, such shorter period as is necessary for the effective operation of the Services.

12.10 Սույն պայմանագրի որևէ լրացում կամ փոփոխություն (բացառությամբ վերոհիշյալ 2.4, 8.2. և 12.9 կետերով նախատեսված դեպքերի) պարտադիր չի լինի մեզ համար, եթե դրա համար չի կազմվել գրավոր փաստաթուղթ ստորագրված Բանկի լիազոր ներկայացուցչի կողմից:

No addition to or modification of any provision of this Agreement (other than as set out in Clauses 2.4, 8.2 and 12.9 above) shall be binding upon us unless made by a written instrument signed by the Bank's duly authorised representative.

12.11 Որոշ երկրների օրենքներով կարող է պահանջվել, որ Դուք ընդունեք լրացուցիչ պայմաններ: Եթե այդպիսի լրացուցիչ պայմաններն անհրաժեշտ են, ապա մենք կտրամադրենք Ձեզ այդ պայմանները սույն Պայմանագրի և այլ համապատասխան փաստաթղթերի հետ մեկտեղ և այդ լրացուցիչ պայմանները կկազմեն սույն Պայմանագրի անբաժանելի մաս:

Certain jurisdictions may have particular legal or regulatory requirements which require you to agree supplementary terms. Where such supplementary terms are necessary, we will provide those terms in writing together with this Agreement and other relevant documentation, and such supplementary terms shall form part of the Agreement.

12.12 Ելջ-Էս-Բի-Սի հմբի անդամ ընկերությունները կարող են կիրառել սույն Պայմանագրի պայմանները, եթե վերջիններս վերաբերվում են իրենց և եթե նրանց վերաբերյալ որևէ հղում է պարունակվում նշված պայմաններում՝ ՀՀ օրենսդրության համապատասխան:

Members of the HSBC Group may enforce the terms of this Agreement where such terms are applicable to them and they have been referenced in such terms, subject to and in accordance with the legislation of RoA.

12.13 Սույն Պայմանագրի և դրա հավելվածների միջև որևէ հակասության առկայության դեպքում (բացառությամբ այն բացահայտ շեղումների, որոնք նշված են հավելվածներում) նախապատվությունը տրվում է Պայմանագրին:

In the event of any conflict between these Terms and Conditions and any of its schedules (other than express variations of these Terms and Conditions set out in any schedule), these Term and Conditions shall prevail to the extent of the inconsistency.

12.14 Եթե որպես Հաճախորդ հանդես են գալիս մեկ կամ մի քանի ֆիզիկական անձինք (անկախ նրանից, թե վերջիններս գործում են որպես առանձին անհատներ, թե որպես ընկերակցության մասնակիցներ, կամ այլ կերպ), Պայմանագրի համաձայն տրվող ցանկացած ծանուցում (սակայն ոչ սույն Պայմանագրի համաձայն նշանակված Օգտագործողների կողմից տրված հանձնարարականները) կարող է տրվել որպես Հաճախորդ հանդես եկող տվյալ անձի կողմից, կամ եթե որպես Հաճախորդ հանդես են գալիս մեկից ավելի անձինք, ապա նրանցից որևէ մեկի կողմից:

Where the Customer comprises one or more individuals (whether acting in a personal capacity or as a trustee(s), partners or otherwise) any notice in this Agreement (but not, for the avoidance of doubt, instructions given by Users appointed in accordance with this Agreement) may be given by the individual who is the Customer or, where the Customer comprises more than one individual, by any of such individuals.

12.15 Եթե որպես Հաճախորդ հանդես է գալիս որևէ ընկերակցություն, ապա սույն Պայմանագիրն ուժի մեջ կլինի մինչև ընկերակցության մասնակիցներից որևէ մեկի կողմից դրա չեղարկումը, անկախ տվյալ ընկերակցության անվանափոխության, մոր մասնակից(ներ) ընդունելու կամ մահվան կամ որևէ այլ պատճառով մասնակիցներից որևէ մեկի դուրս գալու հանգամանքից:

Where the Customer is a partnership, this Agreement will continue in force unless revoked by notice given by any one partner, notwithstanding any change of name of the partnership, admission of a new partner(s) or any partner ceasing to be a member of the partnership by reason of death or otherwise.

13. Լիազորություն Հաճախորդի կողմից Authorisation by Customer

13.1 Դուք լիազորում և հանձնարարում եք մեզ տրամադրել Օառնություններ «Հաշիվների և Օառնությունների Ցանկ» բաժնում թվարկված հաշիվների գծով, ինչպես նաև Առևտրային

Օառնությունների նպատակով, Ձեր և/կամ որևէ Հաճախորդի հետ կապված անձի կողմից մեր Բանկում կամ Ելջ-Էս-Բի-Սի հմբի որևէ անդամ բանկում, մեր կողմից կամ Ելջ-Էս-Բի-Սի հմբի անդամ որևէ այլ ընկերության կողմից Ձեզ և/կամ Ձեր հետ կապված անձին որևէ ծառայություն տրամադրելու կապակցությամբ բացված որևէ ներմուծման և/կամ արտահանման հաշիվների գծով:

You authorise and instruct us to supply the Services in respect of the accounts as set out in the Accounts and Services Schedule, and in respect of and for the purposes of the Trade Services Service, any import and/or export account(s) opened by you and/or any Customer Associate with us and/or any member of the HSBC Group for the purposes of any facilities granted to you and/or any Customer Associates by us and/or any member of the HSBC Group.

13.2 Հետագայում Դուք կարող եք գրավոր նամակով դիմել մեզ, որը պետք է ստորագրված լինի լիազոր ներկայացուցչի կողմից, լիազորելով մեզ տրամադրել որոշակի ծառայություններ կամ դադարեցնել որոշակի ծառայությունների տրամադրումը մեզ մոտ կամ որևէ Հաստատությունում բացված հաշիվների գծով: Սույն պայմանագրով սահմանված պայմանները վերաբերվում են բոլոր հաշիվների գծով բոլոր Օառնություններին:

You may subsequently request and authorise us to provide or withdraw Services in respect of accounts opened at any time with us or an Institution in writing signed by a duly authorised person or person(s). The terms of this Agreement shall apply to all Services provided in relation to any accounts.

13.3. Որոշակի Օառնություններից օգտվելու թույլտվությունը տրված է միայն սահմանափակ թվով Օգտագործողների: Բյն ամօը(ինք), որոնք սույն պայմանագրի Համակարգի Նախնական Ադմինիստրատորներ բաժնի համաձայն նշանակվում է Ձեր կողմից որպես Համակարգի Նախնական Ադմինիստրատոր կարող է ժամանակ առ ժամանակ նշանակել Օգտագործողներ և Համակարգի այլ Ադմինիստրատորներ:

Certain Services may not be accessed by specified Users. The person(s) nominated in the section of this Agreement entitled 'Initial System Administrators' is appointed as the Initial System Administrator(s) and may appoint Users and further System Administrators from time to time.

13.4. Եթե Դուք մուտք եք գործում համակարգ և օգտվում եք Օառնություններից Հաճախորդի հետ կապված անձի անունից, կամ գործում եք որևէ այլ ձևով նշված անձի անունից, ապա Դուք պետք է պատշաճ կերպով լիազորված լինեք այդ անձի կողմից և Դուք համաձայնվում եք Հաճախորդի հետ կապված անձի անունից, որ սույն Պայմանագրի դրույթները կիրառվելու են մեր և Հաճախորդի հետ կապված անձի միջև (այնպես ինչպես դրանք կկիրառվեն համապատասխան Հաճախորդի դեպքում):

If you access or use the System or the Services actually or purportedly on behalf of a Customer Associate, or otherwise act in any way on behalf of such Customer Associate, you shall ensure that you have appropriate authorisation from the Customer Associate to act on its behalf and you agree on behalf of the Customer Associate that the terms of this Agreement shall apply between us and the Customer Associate (as if it were the Customer) in relation to such access, use or other action.

14. Օրենք և Դատավարություն Law and Proceedings

14.1 Սույն պայմանագիրը կարգավորվում է «Հիմնական Բանկը և Կարգավորող օրենսդրությունը» բաժնում նշված համապատասխան երկրի օրենսդրությամբ: Պայմանագրի երկու կողմերն էլ անչեղարկելիորեն ընդունում են տվյալ երկրի դատարանների ոչ-բացառիկ ընդդատությունը սույն պայմանագրի առնչությամբ սկսված ցանկացած դատավարության կապակցությամբ:

This Agreement is governed by and will be construed in accordance with the laws of the jurisdiction named within the section of this Agreement entitled 'Principal Bank and Governing Law'. Both parties irrevocably submit to the non exclusive jurisdiction of the courts of that named jurisdiction in respect of any proceedings which may be initiated in connection with this Agreement.

14.2 Դուք ընդունում եք, որ մեր կողմից Ձեզ տրամադրված ցանկացած Օառնություն կհամարվի տրամադրված համաձայն 14.1 կետում նշված երկրի օրենսդրության, անկախ նրանից թե որտեղից է տվյալ Օգտագործողը մուտք գործում համակարգ կամ որտեղից է օգտվում Օառնություններից (եթե նա մուտք է գործում այլ երկրից):

You agree that any of the Services provided by us to you shall be deemed to be provided in the jurisdiction named pursuant to Clause 14.1, irrespective of where a User accesses the System or uses the Services (if such access or use is in a different jurisdiction).

▶ **Օգտագործողների Ցանկ**
User Schedule

Խնդրում ենք նշել այն անձանց անունները, որոնք օգտվելու են Համակարգի Ադմինիստրատորի արտոնություններից կամ իրավունք են ունենալու HSBCnet ցանցի միջոցով հաստատել Հաճախորդի Հանձնարարականներ: Այն օգտագործողները, որոնք ունենալու են վերոհիշյալ իրավասություններից որևէ մեկը պետք է պատշաճ կերպով նույնացվեն և նրանց հասցեները պետք է ճշտվեն Բանկի կողմից*: Բոլոր նման օգտագործողների վերաբերյալ տվյալները պահպանվելու են՝ հիմնական բանկի գտնվելու երկրի օրենսդրության պահանջները կատարելու նպատակով: Համակարգի Ադմինիստրատորների կամ Հաճախորդի Հանձնարարականները հաստատող անձանց հետ կապված ցանկացած փոփոխություն պետք է անմիջապես հայտնվի մեզ՝ լրացնելով Հաշիվների և Ծառայությունների Փոփոխման Ցուցակը: Անհրաժեշտություն չկա ստուգել այն Օգտագործողների ինքնությունը, որոնք օգտվում են HSBCnet համակարգից սակայն չունեն վերը նկարագրված լիազորություններից ոչ մեկը:

Please detail below those individuals who will be entitled to System Administrator privileges or to authorise Customer Instructions on HSBCnet. Users, who have either of these entitlements, will need to be positively identified and have their addresses verified to the satisfaction of the Bank*. Details of all such Users will be retained in order to comply with local regulatory requirements in the jurisdiction of where the principal bank is located. Any changes to the list of Users who act as either System Administrators or Customer Instruction authorisers must be advised to us through completion of the Accounts and Services Amendment Schedule. Users of HSBCnet who do not have either of these entitlements do not need to be identified.

Լրիվ անուն Full Name	Տան հասցեն Home Address	Ստորագրություն** Signature**	Համակարգի ադմինիստրատորի արտոնություններ ¹ System Administrator privileges ¹	Հանձնարարականը հաստատող անձի ² արտոնություններ ² Customer Instruction authoriser privileges ²	Օգտագործողը Բանկի մանդատում ³ User on Bank Mandate ³	Օգտագործողի Նույնացման համար (Բանկի ներքին օգտագործման համար) ID (Bank Use only)
-------------------------	----------------------------	---------------------------------	--	--	---	---

* Օգտագործողների նույնացման նպատակով, Բանկը կարող է պահանջել այն անձանց անձը հաստատող փաստաթղթի պատճենները, որոնք օգտվելու են Համակարգի Ադմինիստրատորի արտոնություններից կամ իրավունք են ունենալու HSBCnet ցանցի միջոցով հաստատել Հաճախորդի Հանձնարարականներ:

* With the purpose of identifying Users who will be entitled to System Administrator privileges or to authorize Customer Instructions on HSBCnet, the Bank may require copies of Identification Documents of such individuals

**Ստորագրելով սույն աղյուսակի տակ ես տալիս եմ իմ համաձայնությունն առ այն, որ անհրաժեշտության դեպքում կարող է կատարվել ինքնության ստուգում և/կամ վարկունակության գնահատում՝ կապված փողերի լվացմանը վերաբերող օրենսդրությամբ սահմանված պահանջների հետ, կամ էլ զեղծարարությունների կանխարգելման նպատակով և տալիս եմ իմ համաձայնությունը ցանկացած այլ նման նպատակով իմ անձնական տվյալները (ինչպես սահմանված է 1995 թվականի Աճճճճճճ Տվյալների պաշտպանության եվրոպական Դիրեկտիվում) մշակելու համար:

**By signing this schedule, I agree that an identity and/or credit check may be carried out where appropriate, in connection with the requirements of money laundering legislation, or for fraud prevention purposes and I consent to the processing of personal data (as that term is defined in the European Data Protection Directive 1995) relating to me for any such purposes.

1. Մուտք արեք “Y”, եթե Օգտագործողն ունի Համակարգի Ադմինիստրատորի բոլոր արտոնությունները, ինչպես սահմանված է սույն Պայմանագրում:

Enter ‘Y’ if the User will have the System Administrator privileges as defined in this Agreement.

2. Մուտք արեք “Y” եթե Օգտագործողն իրավասու է լինելու լիազորել Հանձնարարականներ HSBCnet համակարգի միջոցով:

Enter ‘Y’ if the User will have the ability to authorise Customer Instructions through HSBCnet.

3. Մուտք արեք “Y” եթե Օգտագործողն արդեն Բանկի մանդատում է:

Enter ‘Y’ if the User is already on the Bank Mandate.

Բաժին 6
Section 6

Բանկի ներքին օգտագործման համար **CIN**
For Bank Use Only: CIN

► Ենթակա է հաճախորդի սպասարկման համար պատասխանատու աշխատակցի կողմից լրացման` (բանկի ներքին օգտագործման համար)
Relationship Manager Sign Off – For Bank Use Only

Հաճախորդի անուն
Customer Name

CIN համար
CIN Number

Չեղարկման MD համար (եթե առկա է)
Hexagon MD number (if applicable)

Ցանկացած լրացուցիչ
հաշիվներ/ծառայություններ
Any additional Accounts/Services?

Հաճախորդի տեսակ SME / CMB / CIB / FI (Չնշեք համապատասխանը)
Customer type

Վաճառքի գծով ղեկավար
Sales Manager

BI կոնտակտ (եթե կիրառելի է)
BI Contact (if Applicable)

Սահմանաչափեր
Limits

Հաստատված օրական BACS սահմանաչափ £
Approved daily BACS limit

Հաստատված օրական արտոնյալ վճարումներ Արժույթի փոխանցում/Ցերեկային օվերդրաֆտի սահմանաչափ £
Approved daily Priority Payments/Currency Transfer/Daylight Overdraft limit

Ֆունտ Ստերլինգի և Այլ Արժույթների Սահմանաչափեր
Sterling and Currency Limits

Արժույթների սահմանաչափերը պետք է արտահայտված լինեն այն բոլոր արժույթներով, որոնցով տվյալ հաճախորդն ունի հաշիվներ և որոնց գծով պահանջել է վճարման գործառնություն: Յուրաքանչյուր արժույթի գծով դեբետագրման զուտ սահմանաչափը կարող է հավասար լինել, բայց չի կարող ավել լինել քան Հաստատված օրական արտոնյալ վճարումների / արժույթի փոխանցման/ ցերեկային օվերդրաֆտի սահմանաչափերը: Օգտագործել բանկի կողմից սահմանված ընթացիկ վերացական դրույքները:

Currency Limits MUST be expressed in all currencies where the customer has an account and has requested payment functionality. Each currency net debit limit may be equal to but not more than the Approved daily Priority Payments/Currency Transfer/Daylight overdraft limit. Use the bank's current notional rates.

Արժույթի կոդ <i>Currency Code</i>			Ղեբետագրման զուտ սահմանաչափ <i>Net Debit Limit</i>
G	B	P	

ՀԳԿ-ի ստորագրություն
RM Signature _____

Անուն
Print Name _____

Ամսաթիվ
Date _____

ՀԳԿ-ի գտնվելու վայր
RM Location/Sort Code _____

ՀԳԿ-ի հեռախոսի համար
RM Telephone Number _____

Ծրագրի ուսուցանում հեռախոսով
Telephony Training

Սլոյթի այցելություն` ուսուցանման նպատակով
Training Visit

(Սլոյթի այցելություն` ուսուցանման նպատակով տարբերակը ընտրելու դեպքում համոզվեք, որ հաշիվ-ապրանքագրում ճիշտ նշում է արված)
(If Training visit has been selected, please ensure the invoicing is correctly marked)

Մուտք արեք սույն դիմումի էջերի քանակը
Enter total number of sheets of paper in this application

<input type="checkbox"/>	Հաճախորդի անուն <i>Customer Name</i>	<input type="checkbox"/>	Սահմանաչափեր <i>Limits</i>
<input type="checkbox"/>	Հաճախորդի ճանաչելու գործընթաց <i>KYC</i>	<input type="checkbox"/>	Կապված անձինք <i>Associates</i>
<input type="checkbox"/>	Ստորագրություններ <i>Signature</i>	<input type="checkbox"/>	Հաշիվ ապրանքագրեր <i>Invoicing</i>

Ստանդարտ սակագին
Standard Tariff

Սահմանափակ սակագին
Restricted Tariff

Նշում (խնդրում ենք լրացնել հաշիվ-ապրանքագիրը, եթե default գինը կիրառելի չէ: Որևէ տեղեկությունների բացակայության դեպքում կկիրառվի default գինը):
NB (Please complete the invoicing form if default prices are not applicable, in the absence of information, default pricing will apply)

Հաշիվների դուրսգրման հաշիվ
Billing Account (sort code-account number)

Հաշիվների դուրսգրման հասցեն, ինչպես նշված է 1-ին էջում
Billing Address: As per page 1

RM Code	<input type="text"/>	Sales Manager Code	<input type="text"/>
---------	----------------------	--------------------	----------------------

► **HSBCnet** Համակարգից Օգտվելու Պայմաններ
HSBCnet Terms and Conditions – Please detach and keep for your records

1. Ներածություն
Introduction

1.1 Հաճախորդը ցանկանում է օգտվել և ստանալ Բանկի կողմից տրամադրվող **HSBCnet** Ծառայությունները, իսկ Բանկն իր հերթին ցանկանում է նատուցել վերոհիշյալ Ծառայությունները Հաճախորդին:

The Customer wishes to use and receive HSBCnet Services provided by the Bank and the Bank is willing to make those Services available to the Customer.

1.2 Հաճախորդը և Բանկը համաձայնվում են, որ նշված Ծառայությունները տրամադրվելու են և օգտագործվելու են Հաճախորդի կողմից և ենթակա են սույն Պայմանագրում սահմանված պայմաններին:

The Customer and the Bank agree that such Services shall be supplied to and used by the Customer subject to the terms and conditions contained in this Agreement.

1.3 Սույն Պայմանագրում օգտագործված հետևյալ արտահայտություններն ունեն հետևյալ նշանակությունը:

In this Agreement, the following terms and expressions shall have the meanings ascribed to them as stated below:

Մուտքի Հսկման Ընթացակարգ	Այն միջոցներն ու ընթացակարգերը, որոնք կիրառվում են Համակարգի գործողությունը հսկելու համար, ինչպես նաև Համակարգի և Ծառայությունների անվտանգ օգտագործման համար մեր կողմից տրվող այլ հրահանգներ, որոնք ժամանակ առ ժամանակ տրամադրվում են ձեզ Համակարգի միջոցով կամ ըստ պահանջի:
Access Control Procedures	<i>The facilities and procedures used to control the operation of the System and other directions for the secure use of the System and the Services from time to time issued or made available by us via the System and on request.</i>
Պայմանագիր	Սույն պայմանագիրը, Ծառայությունների Տրամադրման Պայմանները, պայմանագրի հավելվածները, ծառայությունների տրամադրման գծով ցանկացած այլ լրացուցիչ գրավոր պայմանները և Մուտքի Հսկման Ընթացակարգերը, որոնք կարող են ժամանակ առ ժամանակ փոփոխվել համաձայն սույն Պայմանագրի դրույթների:
Agreement	<i>This agreement, the Terms and Conditions, the schedules, any supplementary terms for the provision of the Services provided to you in writing and the Access Control Procedures, as may be modified from time to time in accordance with the provisions of this Agreement.</i>
Բանկ (նաև մենք, մեզ, մեր բառերը)	Սույն Պայմանագրի «Հիմնական Բանկ և Կարգավորող Օրենսդրություն» բաժնում նշված Բանկը:
Bank (also we, us, our)	<i>The bank named in this Agreement in the section entitled 'Principal Bank and Governing Law'.</i>
Հաճախորդ (նաև դու, դուք, ձեր բառերը) Customer (also you, your, yours)	Սույն Պայմանագրի Հաճախորդի Տվյալները բաժնում նշված հաճախորդը:
Հաճախորդի հետ կապված անձ	<i>The customer named in the section of this Agreement entitled 'Customer Details'.</i>
Customer Associate	(ա) Հաճախորդի հետ կապված ընկերությունները, որոնք նշված են Հաճախորդի հետ կապված Անձի պայմանագրում կամ ինչպես նշված են սույն Պայմանագրի Հաճախորդի հետ կապված Անձանց Ցանկ՝ բաժնում, կամ (բ) Հաճախորդի հետ կապված Անձի կողմից տրված լիազորագրում նշված անձը:
Հաճախորդի հանձնարարական	<i>(a) The associate companies of the Customer named in a Customer Associate agreement or as set out in the section of this Agreement entitled 'Customer Associate Schedule'; or (b) the individual named in a 'Customer Associate Letter of Authority (Individual)'.</i>
Customer Instruction	Ցանկացած ժամուցում, խնդրանք, հրահանգ կամ նամակագրություն, որը ստացվում է Բանկի կողմից Համակարգի միջոցով:
	<i>Any advice, request, instruction or communication which is received by the Bank through the System.</i>

Էլջ-Էս-Բի-Սի Խումբ HSBC Group	Էլջ-Էս-Բի-Սի Հոլդինգս փի Էլ սի-Է և իր դուստր ընկերությունները: HSBC Holdings plc and its subsidiaries and associate undertakings and any of their branches.
Հաստատություն	(ա) Էլջ-Էս-Բի-Սի Խմբի ցանկացած անդամ ընկերություն (բացառությամբ Բանկի) (բ) երրորդ անձ հանդիսացող ֆինանսական հաստատություն, որի մասին Հաճախորդը հայտնել է Բանկին և որը սույն Պայմանագրի իմաստով պետք է դիտվի որպես Հաստատություն:
Institution	<i>(a) Any member of the HSBC Group (other than the Bank); and (b) any third party financial institution which the Customer has notified to the Bank should be treated as an Institution for the purposes of this Agreement.</i>
Նյութեր	Համակարգչային ծրագրերից բացի ցանկացած այլ, գործիքներ կամ նյութեր, որոնք տրամադրվում են Ձեզ Համակարգի միջոցով:
Materials	<i>Any content, tools or other materials (other than software) made available to you.</i>
Ծառայություններ	Ցանկացած էլեկտրոնային բանկային կամ դրա հետ կապված ծառայություններ, որոնք տրամադրվում են Ձեզ Համակարգի միջոցով կամ ցանկացած այլ օժանդակ ծառայություններ, որոնք մենք ժամանակ առ ժամանակ տրամադրում ենք Ձեզ և որոնք նկարագրված են սույն Պայմանագրում:
Services	<i>Any electronic banking or related services supplied via the System and ancillary services that we provide, procure or make available to you from time to time, as may be further described in this Agreement.</i>
Համակարգչային ծրագրեր	Մեր կողմից տրամադրված ցանկացած համակարգչային ծրագրեր՝ Համակարգի հետ օգտագործելու նպատակով:
Software	<i>Any software supplied by us for use in conjunction with the System;</i>
Համակարգ	Էլջ-Էս-Բի-Սի Խմբի HSBCnet համակարգը (ներառյալ ցանկացած համակարգչային ծրագիր), որից կարելի է օգտվել պորտալի միջոցով կամ որևէ այլ մուտքի կետից, որի մասին մենք Ձեզ ժամանակ առ ժամանակ կարող ենք տեղեկացնել:
System	<i>HSBC Group's HSBCnet system (including any Software) accessed via the portal at www.hsbcnet.com or such other access points as we may notify you from time to time.</i>
Համակարգի ադմինիստրատոր	Ձեր կողմից լիազորված աշխատակիցը կամ գործակալը, որն իրավունք ունի միանձնյա կամ այլ անձի հետ համատեղ նշանակել Օգտագործողներ՝ սույն Պայմանագրում սահմանված կարգով:
System Administrator	<i>Your employee or agent empowered by you with either single or joint authority to appoint Users as set out in this Agreement.</i>
Օգտագործող(ներ)	Հաճախորդի կողմից նշանակված Ձեր աշխատողներից, գործակալներից որևէ մեկը կամ որևէ այլ անձ(ինք), որոնք ժամանակ առ ժամանակ նշանակվում են սույն Պայմանագրին համաձայն՝ Համակարգի օգտագործելու նպատակով:
User (s)	<i>Any of your employees, agents and any other individual(s) authorized by the Customer, whom from time to time are appointed to use the System pursuant to this Agreement.</i>
Օգտագործողներին վերաբերող պայմաններ	Օգտագործողի կողմից Համակարգի օգտագործմանը վերաբերող պայմաններ, որոնք ժամանակ առ ժամանակ տրամադրվում են մեր կողմից Համակարգի միջոցով կամ ըստ պահանջի:
User Terms	<i>The terms and conditions relating to a User's use of the System from time to time issued or made available by us via the System and on request.</i>
1.4 Սույն Պայմանագրում օգտագործված եզակի թվով արտահայտությունները ներառում են հոգնակի թվով օգտագործված նույն արտահայտությունները և հակառակը, իսկ պայմանագրի կետերի վերնագրերը տրված են միայն հարմարավետության նպատակներից ելնելով և չեն ազդում դրանց մեկնաբանման վրա:	<i>In this Agreement, references to the singular include the plural and vice versa and clause headings are included for convenience only and do not affect its interpretation.</i>

2. Ծառայություններ
Services

2.1 Սույն Պայմանագրով սահմանված հրահանգների և ընթացակարգերի պահանջները Ձեր կողմից կատարելու դեպքում, մենք պարտավորվում ենք ձեռնարկել բոլոր ողջամիտ միջոցները Ծառայությունները Ձեզ տրամադրելու նպատակով: Այդ Ծառայությունների վրա կտարածվեն Օգտագործողներին վերաբերվող սահմանափակումների մասին մեր կողմից ժամանակ առ ժամանակ ստացվող ծանուցումները:

Subject to you complying with the instructions and procedures set out in this Agreement, we will use reasonable efforts to make the Services available to you. Such Services will be subject to any notifications of any restrictions received by us relating to any such Users from time to time.

2.2 Դուք հաղորդակցվում եք մեզ հետ Ձեր Օգտագործողների միջոցով: Դուք պարտավոր եք երաշխավորել, որ Ձեր Օգտագործողները օգտագործում են Համակարգը և Ծառայությունները միայն սույն Պայմանագրի պայմաններին համապատասխան և համաձայնվում են հետևել և կատարել այդ պայմանները:

You shall communicate with us via your Users. You shall ensure your Users only use the System and the Services in accordance with all terms of this Agreement and agree to be bound by and observe the terms of this Agreement.

2.3 Ժամանակ առ ժամանակ մենք կարող ենք տրամադրել Ձեզ գործող Ծառայությունների նոր և կատարելագործված տարբերակները, որոնք ենթակա կլինեն սույն Պայմանագրի դրույթներին:

From time to time, we may make available to you enhancements, improvements and upgrades to the existing Services, which shall be governed by the provisions of this Agreement.

2.4 Երբեմն Դուք կարող եք պահանջել, կամ մենք կարող ենք առաջարկել Ձեզ նոր ծառայություններ: Նշված ծառայությունները առաջարկելուց առաջ, մենք կտրամադրենք Ձեզ այդ նոր ծառայությունների գրավոր պայմանները, որոնք կկազմեն սույն Պայմանագրի անբաժանելի մասը: Ձեր (կամ ձեր օգտագործողների կողմից) Համակարգ մուտք գործելը՝ այդպիսի նոր ծառայություններից օգտվելու նպատակով կնշանակի Ձեր կողմից բոլոր նման պայմանների ընդունում:

From time to time, you may require or we may offer to you new services. We will provide to you in writing any terms applicable to those new services prior to making them available to you, which will form part of this Agreement. If you consent to receiving such new services, then your (or any of your Users') access to or use of any such new services shall be deemed to constitute your acceptance of any such terms.

3. Հաճախորդի Հանձնարարականներ
Customer Instructions

3.1 Համակարգի միջոցով Բանկի կողմից ստացված և ակնհայտորեն վավեր բոլոր Հաճախորդի Հանձնարարականները կդիտվեն մեր կողմից, որպես Ձեր կողմից պատշաճ ուղարկված հանձնարարականներ, նույնիսկ եթե դրանք խարդախ ճանապարհով պատրաստված լինեն կամ հակասեն Ձեր կողմից երբևէ Ձեր հաշիվների կամ գործերի առնչությամբ տրված որևէ այլ հանձնարարականների կամ հրահանգների պայմաններին: Մենք պարտավոր չենք ստուգել Հաճախորդների Հանձնարարականների իսկությունը կամ դրանք տված անձի կամ անձանց լիազորությունները:

We may treat all apparently valid Customer Instructions received by the Bank through the System as instructions properly authorised by you, even if made fraudulently and even if they conflict with the terms of any other instructions or mandates given by you at any time concerning your accounts or affairs. We shall be under no obligation to check the authenticity of Customer Instructions or the authority of the person or persons giving them.

3.2 Եթե մենք հիմք ունենք ենթադրելու, որ ենթադրաբար Ձեր կողմից ուղղարկված Հաճախորդի Հանձնարարականը պատշաճ կերպով չի լիազորվել Ձեր կողմից կամ որ տեղի է ունեցել Ձեր կողմից Համակարգի օգտագործման հետ կապված անվտանգության ընթացակարգի որևէ այլ խախտում, մենք մեզ իրավունք ենք վերապահում չկատարել կամ հետաձգել Հաճախորդի Հանձնարարականի կատարումը և հնարավոր կարճ ժամկետում տեղյակ կպահենք Ձեզ այդ մասին:

Where we have reason to believe that a Customer Instruction purporting to come from you has not been properly authorised by you or that any other breach of security has occurred in relation to your use of the System, we reserve the right not to act, or to delay acting upon the Customer Instruction and we will inform you as soon as is reasonably possible.

3.3 Դուք պատասխանատվություն եք կրում Հաճախորդի Հանձնարարականի ճշտության և ամբողջականության համար (ներառյալ Սուտքի Հսկման Ընթացակարգերի ճիշտ կիրառման համար) և պետք է համոզված լինեք, որ դրանց պատճառով վերջնական արդյունքը չի տուժի:

You are responsible for the accuracy and completeness of Customer Instructions (including the appropriate application of the Access Control Procedures) and for ensuring that they will achieve your intended purpose.

3.4 Դուք պարտավոր եք հետևել, որ Հաճախորդի Հանձնարարականները ճիշտ փոխանցվեն: Այնուամենայնիվ, չսահմանափակելով վերոհիշյալ պարտավորությունը, մենք կփորձենք ողջամիտ ժամկետում ուղղարկել Ձեզ համապատասխան ծանուցում՝ Հաճախորդի Հանձնարարականը ստանալու վերաբերյալ:

You are responsible for ensuring that Customer Instructions are transmitted correctly. Without prejudice to this obligation, we will use reasonable efforts to despatch an acknowledgement within a reasonable period of receipt by use of a Customer Instruction.

3.5 Եթե ինչ որ պատճառներով Դուք խնդրում եք չեղյալ համարել կամ փոփոխություն անել որևէ Հաճախորդի Հանձնարարականում, ապա մենք կձեռնարկենք բոլոր ողջամիտ քայլերը Ձեր խնդրանքը կատարելու նպատակով: Այնուամենայնիվ, մենք պատասխանատվություն չենք կրում Հաճախորդի Հանձնարարականը չփոխելու կամ չեղյալ չհամարելու համար, եթե Ձեր խնդրանքը ստացվել է այն ժամանակ և այնպիսի հանգամանքներում, երբ նման չեղարկումը կամ փոփոխումն անհնար էին:

In the event that you request us to cancel or modify any Customer Instruction for whatever reason, we will make all reasonable efforts to comply with your request. However, we are not liable for any failure to cancel or modify the Customer Instruction if such a request is received at a time or under circumstances that render us unable to comply with your request.

3.6 Համապատասխան թույլտվության առկայության դեպքում, մենք իրավունք ունենք գանձել Ձեր հաշիվներից, որտեղ էլ որ դրանք սպասարկվեն կամ բացված լինեն, Հաճախորդի Հանձնարարականի հետ կապված վճարված ցանկացած գումարներ կամ կատարված ցանկացած ծախսեր:

Where permitted, we are entitled to debit your accounts, wherever they are situated and whenever they are opened, with any amounts that we have paid or incurred in accordance with a Customer Instruction.

